

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Զարուհի Փոստանջյանի, Անահիտ Բախշյանի, Արմեն Մարտիրոսյանի, Ստյոպա Սաֆարյանի և Լարիսա Ալավերդյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Համաձայն օրենքի նախագծի հիմնավորման՝ նախագծով առաջարկվում է ժամանակավորապես լուծել բացօթյա առևտրով զբաղվող քաղաքացիների աշխատանքի խնդիրը: Սակայն ներկայացված նախագծի դրույթները ժամանակավոր բնույթ չեն կրում, իսկ քաղաքացիների զբաղվածության խնդիրը լուծվում է ֆիզիկական անձանց բացօթյա առևտրի իրականացնելու իրավունք վերապահելով, ինչպես նաև բացօթյա առևտրում վաճառքի

թույլատրված ապրանքների ցանկը բույսերով, բուսական արտադրանքով և ոչ պարենային ապրանքներով համալրելու միջոցով:

Նախագծի 1-ին հոդվածի՝

1. 1-ին մասի վերաբերյալ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ֆիզիկական անձանց արդեն իսկ վերապահված է առանց տնտեսավարող սուբյեկտ գրանցվելու գյուղատնտեսական ապրանքների շուկաներում առևտուր իրականացնելու իրավասություն:

2. 2-րդ մասով նախատեսվում է բացօթյա առևտրում վաճառքի թույլատրված ապրանքների ցանկը լրացնել բույսերով, բուսական արտադրանքով և ոչ պարենային ապրանքներով:

Հաշվի առնելով պարենային և գյուղատնտեսական ապրանքներին ներկայացվող աննդամթերքի անվտանգության պահանջները և պահման պայմանների առանձնահատկությունները՝ գտնում ենք, որ բացօթյա առևտրում վաճառքի թույլատրվող ապրանքների ցանկում նման ապրանքների ընդգրկումը նպատակահարմար չէ:

Ինչ վերաբերում է բացօթյա առևտրում ոչ պարենային ապրանքների վաճառքին, սպառողա խնդիրներ կառաջացնի սպառողների հետ հարաբերություններում, քանի որ բացօթյա առևտրի պայմաններում չեն կարող իրականացվել վաճառվող ապրանքների չափավորձարկում, տեխնիկական զննում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ անհրաժեշտ գործողություններ:

3. 3-րդ մասով նախատեսվող լրացումով առաջարկվում է՝

1) համայնքների ղեկավարների համար բացօթյա առևտուր իրականացնողներին տարածք տրամադրելու պարտավորվածության սահմանում, մինչդեռ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ համայնքի ղեկավարի լիազորությունների մեջ է մտնում միայն համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություն տալը.

2) բացօթյա առևտրում ապրանքների վաճառքն իրականացնել շարժական և ոչ շարժական սայլակներով՝ սահմանափակելով վաճառվող ապրանքների քաշը, ինչը հիմնավորման կարիք ունի.

3) տեղական տուրքի վճարում, մինչդեռ նշված հարաբերությունները կարգավորվում են «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Միաժամանակ հայտնում ենք, որ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված վճարների մոծումը չի ենթադրում տնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց կողմից հարկային պարտականությունների կատարում:

Նախագիծը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոններին:

Ելնելով շարադրվածից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագիծն ըստ էության հետընթաց քայլ է բացօթյա առևտրի իրականացման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության և Երևանի քաղաքապետարանի մոտեցումներից և դրա կարգավորման ուղղությամբ իրականացված աշխատանքներից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արա Գևորգյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առևտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Առևտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է բույսերի, բուսական արտադրանքի եւ ոչ պարենային ապրանքների բացօթյա առևտրի թույլտվությունների տրամադրում:

Հաշվի առնելով, որ ներկայացված նախագծով բացօթյա առևտուր իրականացնողները վճարելու են տեղական տուրքեր «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով եւ չափով, ներկայացված նախագծի ընդունման դեպքում տեղի կունենա տեղական բյուջեների եկամուտների ավելացում:

Միաժամանակ հաշվի առնելով, որ բացակայում են բույսերի, բուսական արտադրանքի եւ ոչ պարենային ապրանքների բացօթյա առևտուր իրականացնողների թվաքանակները, ներկայացված նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության կոնկրետ գնահատում հնարավոր կլինի իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի նիստի թիվ 42 արձանագրային որոշման 11-րդ կետով հաստատված տեղեկանքի առկայության պայմաններում (մասնավորապես, վերոնշյալ գործունեության տեսակների մասին վիճակագրական տվյալների առկայության պայմաններում):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքի նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում **զգալի** ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:
2. Կարգավորման ենթակա հարաբերությունները չեն ազդում «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչների վրա:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթերի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն: Օրենքի նախագծի ընդունմամբ ընդլայնվում են բացօթյա առևտրի շրջանակները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության
բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները առնչվում են բույսերի, բուսական արտադրանքի, ոչ պարենային ապրանքների շուկաների հետ և նախագծով նախատեսվում է բույսերի, բուսական արտադրանքի, ոչ պարենային ապրանքների բացօթյա առևտրի նկատմամբ սահմանափակման վերացում:

Ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլում առանցքային ուղղություններով կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է՝

Նախագծի ընդունմամբ առաջանում է միմյանց հետ մրցելու մատակարարների շարժառիթների սահմանափակման հնարավորություն, քանի որ բույսերի, բուսական արտադրանքի, ոչ պարենային ապրանքների բացօթյա առևտրի պարագայում սպառողների համար բարձրանում է առկա մատակարարին փոխելու և մեկ այլ մատակարարից գնումներ կատարելու հնարավորությունը՝ հաշվի առնելով, որ բացօթյա առևտրի սուբյեկտները ունեն առավել ցածր գին առաջարկելու հնարավորություն, բացի դրանից սպառողին առավել մոտ գտնվելու առումով դրսևորում են ճկունություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա զգալի բացասական ազդեցություն հայտնաբերվելու եզրակացություն:

Եզրակացություն

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ /այսուհետ՝ նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27՝ և 28-րդ հոդվածների պահանջները: Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագիծն ունի դրական ազդեցություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չի հակասում: Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» 2004թ. նոյեմբերի 24-ի Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-134-Ն)

1. 5¹ -րդ հոդվածի 1-ին մասից հանել «միայն» բառը, իսկ «ձեռնարկատերերը» բառից հետո ավելացնել «, ինչպես նաեւ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք» բառերը:

2. 2-րդ մասից հանել «միայն» բառը, իսկ «ըմպելիքների» բառից հետո ավելացնել «ինչպես նաեւ բույսերի, բուսական արտադրանքի, ոչ պարենային ապրանքների» բառերը:

3. Ավելացնել նոր՝ 2¹ -րդ եւ 2² -րդ մասեր՝ հետեւյալ բովանդակությամբ.

2¹ . «Համայնքների ղեկավարները պարտավոր են բացօթյա առեւտուր իրականացնողներին տրամադրել առնվազն 1-2 քառ. մետր տարածք՝ բացօթյա առեւտուրը պատշաճ կազմակերպելու համար»:

2² . «Բացօթյա առեւտուր իրականացնողները կարող են սույն օրենքով թույլատրված ապրանքների վաճառքն իրականացնել ինչպես շարժական սայլակներով, այնպես էլ ոչ շարժական:

Անձի մոտ գտնվող շարժական սայլակում ոչ պարենային ապրանքների ընդհանուր քաշը պետք է լինի յոթ կիլոգրամից ոչ ավելի:

Բացօթյա առեւտուր իրականացնողները վճարում են տեղական տուրքեր՝ «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով եւ չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է ժամանակավորապես լուծել բացօթյա առեւտրով զբաղվող քաղաքացիների աշխատանքի խնդիրը:

Հայտնի է, որ ներկայումս աշխատելու հնարավորությունից եւ նվազագույն նյութական ապահովվածությունից զրկվել է շուրջ երեք հազար ընտանիք:

Բարձրագույն իրավական ակտով՝ Սահմանադրությամբ սոցիալական հոչակված պետության քաղաքականության առաջնահերթ խնդիրը պետք է լինի բնակչության սոցիալական վիճակի բարելավումը: Այնինչ բացօթյա առեւտրի ոլորտում վերջին զարգացումները վկայում են հակառակի մասին:

Ներկայացված նախագիծն ուղղված է բնակչության ամենախոցելի խավերից մեկի պաշտպանությանը, որն օրենքի կիրառման արդյունքում հայտնվել է անելանելի վիճակում: